շարժելու և առանց շերեփով խառնելու։ Այդ խէժնից ջուրն առանձնացնում էին. ստացվում էր թաժա պանրանման թանձր զանգված, որը ուղարկվում էր նվեր բարեկամներին և հարևաններին։

Երկրորդ օրվա կաթից, որն ավելի ջրալի և նոսր է լինում, եփում էին բրլամա, նույնպես առանց մեջը ալյուր խառնելու, սակայն շարունակ շերեփով խառնելով, որ խարաբ չլինի, չփչանա։ Նոր ծնած գոմեշի կաթից, որը կովի կաթից ավելի թանձր է և յուղալի, առաջին երեք օրն էլ եփվում էր խէժը։ Ամանը վերադարձնում էին անլվա, շուռ տված և ոռքին աղ ածած, որ կովը ապագայում ավելի շատ կաթ տա։ Բացատրում են, իբր թե այդ աղով կովը խրախուսվում էր, սակայն հնարավոր է և մի այլ բացատրություն, որն ավելի հավանական է թվում, այն է, որ աղն այստեղ գործադրվում էր կովը չար ոգիներից պաշտպանված պահելու համար։ Առհասարակ՝ Զանգեզուրումն էլ աղը չարից պաշտպանող միջոց էր համարվում[94]։

Փոխ տալ կարելի էր միայն եփած կաթ։ Իսկ եթե տալիս էին հում կաթ, պիտի մեջը ձգեին մի կտոր ածուխ, որ կաթը չպակասի, որովհետև ածուխից ֆաշկէրը՝ չար ոգիները վախենում էին։

Զատկական կաթը եփ էին տալիս այն կրակի վրա, որը բորբոքում էին Դօնդոօնշի՝ Տեառնընդառաջի տոնի խարույկից վերցրած ածուխով կամ խանձված փայտով։

Եթե կաթը եփելիս հարևանը գար կրակ վերցնելու, նա պարտավոր էր նախ կաթի պղնձի խուփի վրա մի կանաչ տերև ձգել և ապա տակից կրակը վերցնել. այսպիսով, նա այրող, ոչնչացնող տարրը փոխարինում էր թարմ, ապրող իրով։ Կրակը տալիս էին միայն կաթը եփելուց և գետին դնելուց հետո։

Եթե մի հարևան մյուսին ուղարկում էր կաթ կամ մածուն, ամանը պիտի վերադարձվեր առանց լվանալու՝ կաթի կամ մածնի սպառվելու առաջն առնելու համար։

Հաճախ կաթ, մածուն կամ այլ մթերք նվեր ստանալուն ի պատասխան ուղարկվում էր փոխ-նվեր—չոր բրինձ, թազա պանիր, որևէ միրգ։

Մածունը մերում էին մընրցկամանի մեջ։ Արգելվում էր մածնով, ինչպես և կաթնով կրակ հանգցնելը։ Այստեղ գործում էր նույն տրամաբանությունը, որը թելադրում էր անդադրում անձրևը կտրելու համար անձրևաջուրը կրակի վրա գոլորշիացնել. մածունը կամ կաթը կրակի վրա թափելով և այդպիսով այն որոշ չափով գոլորշիացնելով՝ կարող էին պակասեցնել նրա առատությունը։

Կարագը հարում էին կախովի փայտե խնոցու մեջ[95]։ Դա մի երկարացրած ձվաձև գլանակ է, որը շինված էր ամբողջական ծառաբնից հատուկ գործիքի միջոցով։ Նրա երկարությունը 1—1,20 մ, տրամագիծը 30—40 սմ։ Խնոցին

---

[94] Եթե խէժը, բրլաման հարևաններին և բարեկամներին նվեր ուղարկելը կապ ունի նախնադարյան համայնական կյանքի հետ, նույնը կարելի է ասել և Համբարձման օրը մատաղ բերվող կաքավի մասին, առաջինը աչքի առաջ ունի ընդհանուր սպառում, երկրորդը՝ ընդհանուր պաշտպանություն։

[95] Ծծումը՝ գետնին պառկած խնոցին Զանգեզուրում քիչ էր գործածվում։ Մեղրու շրջանում՝ խրնէցէն։ Կապանում գործածվում էր ծծումը։ Ծծումի օրինակները գտնվում են բրոնզե դարի իրերի մեջ, կախովի խնոցին՝ ոչ։ Հարց է ծագում՝ խնոցու երևալը չպե՞տք է կապվի հնդեվրոպական տարրի երևալու հետ Հայկական լեռնաշխարհում։ Աչքի առաջ պետք է ունենալ այն իրողությունը, որ հույները և հռոմայեցիք կարագ և յուղ չգիտեին և հարել սովորեցին գերմանացիներից։ Լատիներեն յուղը կոչվում է գերմանական բառով buterina, հունարեն՝ βούτυρον.